ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____ «31» Օգոստոս 20 22 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևան, Մալաթիա-Սեբաստիա

Մարզ,համայնք

հ.179հիմն.դպրոց_____IIIա__դասարան_____

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Ալեքսանյան Աստղիկ Վաղարշակի

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«2022 - 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* 3-րդ «ա» դասարանում ընդգրկված է 23 աշակերտ, որոնցից 14-ը աղջիկ են, 9-ը՝ տղա: Դասարանում ձևավորված է համերաշխ կոլեկտիվ, պարտաճանաչ են, կարգապահ, ընկերասեր: Հոգատար են միմյանց նկատմամբ: Աշակերտների մտավոր և ֆիզիկական տվյալները բավարար են ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Դասարանը համերաշխ է, աշակերտները սիրում են միմյանց: Երկու աշակերտի հետ աշխատում է լոգոպեդը:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ձևավորել աշակերտական կոլեկտիվ: Ձևավորել ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք: Հսկողություն սահմանել աշակերտների հաճախումներին, և՛ արտադպրոցական, և՛ արտադասարանական խմբակների մասնակցությանը: Ուսումնասիրել աշակերտների ձեռքբերումները, հաջողությունները և բացթողումները: Ձևավորեել դասարանական անկյուն: Արտաուսումնական և արտադասարանական աշխատանքների միջոցով ձևավորել աշակերտների աշխարհայացքը:

Կազմակերպել հրապարակային դասեր, դաս-միջոցառումներ, ուսումնաճանաչողական էքսկուրսիաներ: Անցկացնել էլեկտրոնային դասեր:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Ծանոթացնել եկեղեցական տաղավար տոներին, կազմակերպել քննարկումներ հայ ժողովրդի դարերի ընթացքում ձեռք բերած հոգևոր արժեքների շուրջ:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Համագործակցել կերպարվեստի, երաժշտության ուսուցիչների հետ, հաճախակի կազմակերպել ձեռքի աշխատանքների, նկարների ցուցահանդեսներ, կազմակերպել ներկայացումների դիտումներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Կազմակերպել զրույցներ հայրենասիրական թեմաներով, պատմել հայ հերոս զավակների, հերոսական մարտերի մասին, իմանալ ՀՀ օրհներգը, դրոշի, զինանշանի մեկնաբանությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասարանում ձևավորել անկյուն՝ « Մեր սպորտային նվաճումները» խորագրով, կազմակերպել շաշկու, շախմատի մրցույթներ, սպորտլանդիաներ, անցկացնել ձմեռային սպորտային խաղեր, այցելել սահադաշտ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Դասղեկի ժամերին պատրաստել հետաքրքիր, օգտակար իրեր, խաղալիքներ՝ օգտագործել անպետք թվացող իրեր: Հաճախ զրուցել աշխատանքի անհրաժեշտության ու կարևորության մասին: Աշխատանքի դերը մարդու կյանքում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Դասարանում աճեցնել սենյակային բույսեր, որոնց խնամքը հանձնարարել աշակերտներին: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բուսաբանական այգի, բնության թանգարան, կենդանաբանական այգի:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Անհատական աշխատանք տանել ուսման մեջ հետ մնացող, անհարգելի և հաճախակի բացակայություններ և ուշացումներ ունեցող աշակերտների ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I շ.	Անցկացրեցինք զրույց՝ նվիրված «Գիտելիքի, գրի և գրագրության»		
	օրվան: Ապահովվեցին դասագրքերով:	02.09.2022թ.	դասվար
II շ.	Ծանոթացանք դպրոցի ներքին կարգապահական կանոններին,		
	դասարանի համար մշակեցինք վարքի և կարգապահության		
	չափանիշներ:	09.09.2022թ.	դասվար
III շ.	Զրույց՝ նվիրված Հայաստանի անկախության օրվան՝ « Իմ հայ-		
	րենիքը ես շատ եմ սիրում»: Ունկնդրեցինք հայրենասիրա-		
	կան երգեր:	16.09.2022թ.	դասվար
IV շ.	Ծանոթացանք անձնական հիգիենայի կանոններին: Որոշվեց		
	հետևել դասասենյակի, դպրոցական զույքի մաքրությանը:	23.09.2022թ.	դասվար
V շ.	Սովորեցինք ժպտալ ամենքին, հասկացանք, որ ժպիտից		
	կարող է ընկերություն ծնվել:	30.09.2022թ.	դասվար
VI շ.	Կարևորեցինք ուսուցչի դերը, մտածեցինք երախտիքի խոսքեր՝		
	դասավանդող ուսուցիչներին շնորհավորելու համար:	07.10.2022թ.	դասվար
VII շ.	Խոսեցինք Հայաստանի մայրաքաղաքների մասին, գովերգե-		
	ցինք մեր «Վարդագույն քաղաքը»: Սովորեցինք «Էրեբունի-		
	Երևան» երգը:	14.10.2022թ.	դասվար
VIII շ.	Ծանոթացանք կարգավորվող և չկարգվորվող խաչմերուկներին		
	Կազմակերպեցինք խաղ-վարժանք:	21.10.2022թ.	դասվար
IX շ.	Ներկայացնել տեսանյութեր ճանապարհային գծանմուշների		
	վերաբերյալ, սովորել փողոցն անցնելու ալգորիթմը:	04.11.2022թ.	դասվար
X շ.	Քննարկեցինք հեքիաթներ, անցկացրինք զրույց՝ «Բարությունը		
	բումերանգ է » թեմայով:	11.11.2022թ.	դասվար
XI շ.	Ներկայացնել կոնֆլիկտների լուծման հնարավոր տարբերակ-		
	ները: Զարգացնել բանակցելու, համագործակցելու, որոշումներ		
	կայացնելու հմտություններ:	18.11.2022թ.	դասվար
XII շ.	Կազմակերպեցինք «Փուչիկ բոնցի» խաղը՝ խթանելով փոխ-		
	օգնություն՝ ակտիվ համագործակցությամբ լուծումներ որոնե-		
	լով:	25.11.2022թ	դասվար
XIII շ.	Ծանոթացանք բանավեճի անցկացման կանոններին, կազմա-		
	կերպեցինք բանավեճ:	02.12.2022թ.	դասվար
XIV շ.	Խոսեցինք բնական աղետների մասին, իմացանք, թե ինչպես		
	պետք է վարվենք երկրաշարժի ժամանակ, երբ տանն եք,		
	դպրոցում, բաց տարածության մեջ:	09.12.20222.	դասվար

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
XV2.	Ծանոթացնել ճանապարհի կարգավորող ազդանշաններին:	16.12.2022թ.	դասվար
XVI2.	Խոսեցինք տարբեր երկրներում ամանորյա սովորությունների		
	մասին, նամակ գրեցինք Ձմեռ պապիկին : Մտածեցինք , որ		
	հրաշքները երկարացնում են մանկությունը:	23.12.2022թ.	դասվար
XVII2.	Տեսանյութի օգնությամբ ծանոթացանք ճանապարհային		
	նշաններին, դրանց խմբերին:	13.01.2023թ.	դասվար
XVIII2.	Ներկայացնել տրանսպորտային միջոցներից ճանապարհա--		
	տրանսպորտային պատահարներից խուսափելու ուղիները:	20.01.2023թ.	դասվար
XIX2.	Զրույց ծավալել բանակի կարևորության, հայրենիքի պաշտպա-		
	նության շուրջ սովորել «Ես զինվորն եմ մեր հայոց բանակի»		
	երգը:	27.01.2023թ.	դասվար
XX2.	Օգնել գիտակցել ֆիզիկական աշխատանքի և սպորտի դերը		
	առողջության պահպանման գործում:	03.02.2023թ.	դասվար
XXI2.	Կատարեցինք խմբային աշխատանքներ՝ հասկանալու համար		
	յուրաքանչյուրի՝ խմբի մաս հանդիսանալու կարևորությունը:	10.02.2023թ	դասվար
XXII2.	Կազմակերպել «Գիրքը մարդու բարեկամն է» խմբային աշխա-		
	տանքը, գիտակցել գրքի, գիտելիքի դերը:	17.02.2023թ.	դասվար
XXIII2.	Դասարանում ստեղծել հետիոտնային անցումներ, խաղալ		
	տարբեր խաղեր:	24.02.2023թ.	դասվար
XXIV2.	Ներկայացնել տրանսպորտային միջոցներից ճանապարհա-		
	տրանսպորտային պատահարներից խուսափելու ուղիները:	03.03.2023թ.	դասվար
XXV2.	Մեր տան արքան է մայրս: «Ինչու՞ եմ սիրում մայրիկիս»:		
	Տոնական բացիկի պատրաստում:	10.03.2023թ.	դասվար
XXVI2.	«Մենք չանենք, որ ո՞վ անի»ձևավորելպատասխանատվության		
	զգացում շրջապատի մաքրության հարցում:	17.03.2023թ.	դասվար
XXVII2.	Ծանոթացնել տրանսպորտային միջոցների տեսակներին:		
	Տեսաֆիլմի միջոցով ամրապնդել:	31.03.2023թ.	դասվար
XXVIII2.	Օգնել գիտակցել և տարբերակել կարիքներն ու պահանջմունք-		
	ներն ըստ առաջնահերթության:Նպաստել պարտականություն-	07.04.2023թ.	դասվար
XXIX2.	Քննարկեցին լավ և վատ սովորություններ, որոնք դրսևորվում		
	են փողոցն անցնելիս:	14.04.2023թ.	դասվար
XXX2.	Զրույցի միջոցով ներկայացրեցինք « Սուրբ զատիկի»		
	խորհուրդը:	21.04.2023թ.	դասվար

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
XXXI շ.	Հայոց մեծ եղեռն: Զրույց-քննարկում	28.04.2023թ	դասվար
XXXII շ.	Ե՞րբ պետք է լռել: Մտածեցինք « Ամեն ինչ կարելի է ասել, բայց		
	կարելի՞ է ամեն ինչ ասել» հարցերի շուրջ քննարկումներ:	05.05.2023թ.	դասվար
XXXIII շ.	Զրույցի միջոցով ներկայացրեցինք մայիսյան հաղթանակները,		
	հայ ժողովրդի հարատևության գաղտնիքը:	12.05.2023թ.	դասվար
XXXIV շ.	Ընկերներին ներկայացրեցինք մեր ձոռքբերումները:	19.05.2023թ.	դասվար
XXXV շ.	Ամփոփեցինք ուստարվա դաստիարակչական		
	աշխատանքները:	26.05. 2023թ	դասվար